

բարեխառուս կը յուսանք» (1) :

Դաւանական մարդի վրայ, Յակոբ Կաթողիկոս ի սկզբան որոշ վերապահութիւն մը կ'ունենայ Կաթողիկէութեան հանդէպ : Սակայն յետագային կը փոխէ իր ընթացքը : Պէտք չէ կարծել որ քաղաքականութիւն էր Հայրապետին ըրածը : Սա արդիւնքն էր ներքին համոզման մը, որ պարագաներու բերումով կը խորանար եւ աւելի բացորոշ կերպով կը յայտնուէր :

1659ին պատահած հետեւեալ դէպքը կը փաստէ մեր կարծիքը : Զայն կը պատմէ Հ. Կղեմէս Կալանոս 26 Յունիս 1664ին Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովին Քարտուղարին՝ Գերպոյժ. Ալպերիչիի՝ ուղղուած գրութեամբ մը : Հայագէտ Թէադինեանը կ'ըսէ՝ թէ Յակոբ Կաթողիկոսին փոքրաւորէն՝ Տէր Բարսեղ Բարսեղեանէ՝ լսած է որ «գլեբոյիշեալ Յակոբ Պատրիարքը ա՛յնչպի հակած էր Կաթողիկէ Հաւատքին, որ երբ իր ձեռքը հասաւ առաջին պատմական հատորը «Միաբանութեան Հայոց Ս. Եկեղեցւոյն ընդ Մեծի Ս. Եկեղեցւոյն Հոռվմայ», երկար օրեր մեկուսացած մնաց, առանց ունկնդրութիւն տալու, ամբողջ գէրքը կարդալու նպատակաւ : Հարուստ, բայց հերետիկոս հայ անձնաւորութիւն մը, դարմացած՝ Պատրիարքին

(1) Յ. Քիւրտեան. Նիւթեր Յակոբ Զուղայեցի Կաթողիկոսի Կենսագրութեան համար «Հասկ» ԻԱ. Տարի, Փետր. 1952, էջ 41 :